

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ը*)

Պատմուածք

Մ Ա Ք Ս Ի Մ Գ Օ Ր Կ Ի Ց Ի

... Գիշեր էր, երբ ես փողոց դուրս եկայ այն տնից, ուր, ինձ մօտիկ մարդկանց ըրջանում, կարդում էի իմ առաջին, տպուած պատմուածքը: Ինձ շատ էին գովում նրա համար, և ես հաճելի կերպով յուղուած, դանդաղ քայլում էի ամայի փողոցով, առաջին անգամ իմ կեանքում զգալով այդքան լիօրէն ապրելու զուարձութիւնը:

Փետրուար ամսում էր այդ. գիշերը պայծառ էր, և անամպ երկինքը, աստղերով խիտ հիւսուած, չնչում էր զուարթ պարզութեամբ երկրի վրայ, որ ծածկուած էր հէնց նոր եկած ձիւնի շքեղ զարդարանքով: Ծառերի ճիւղերը, յանկապատերի վրայից կախուելով, ձգում էին իմ ճանապարհի վրայ ստուերների հրաշազարդ նկարներ, վառ և խնդալի պապղում էին ձիւնի բիւրեղները լուսնի կապոյտ ու փաղաքչող փայլի մէջ: Ոչ մի տեղ չէր երեւում ոչ մի կենդանի էակ, և իմ ուտերի տակ ձիւնի ճռճողոցը միակ ձայնն էր, որ խանգարում էր այդ պայծառ, ինձ համար յիշատակելի զիշերուայ հանդիսաւոր լուութիւնը... Ես մտածում էի.

—Լաւ է մի բան լինել երկրի վրայ մարդկանց մէջ! Եւ երեւակայութիւնը, չը խնայելով վառ գոյներ, նկարում էր ինձ իմ ապագան...

—Այո, գուք հիանալի մի բան էք զրել!.. Այդ—իրողութիւն է!—ասաց մէկը մտախոն կերպով իմ մէջքի յետեւից: Ես ցնցուեցի յանկարծակիութիւնից և յետ նայեցի:

Փոքրիկ, մուգ հագնուած մի մարդ հասաւ ինձ և քայլեց

*) Գրուած է 1898 թ.

ինձ հաւասար, ներքեմից վերև նայելով իմ երեսին և ժպտալով սուր ժպիտով; Նրա մէջ ամեն ինչ սուր էր, հայեացը, այսովոկները, ծնօտը էսպանիոլ մօրուքով. Նրա ամբողջ փոքրիկ, չոր կազմուածքը աչք էր ծակում իր տարօրինակ անկիւնաւուրութեամբ: Նա գնում էր թեթե և մի տեսակ անձայն, կարծես սահում էր ձիւնի վրայ: Ես նրան չէի տեսել այնտեղ, ուր կարդում էի, և, հասկանալի է, որ զարմացած էի նրա բացականչութեամբ: Ո՞րտեղից և ովէ է նա:

—Դուք... ես լսում էիք?—հարցրի ես:

—Այս, հաճութիւն ունեցայ:

Խօսում էր նա տեսօր ձայնով: Նրա շրթունքները բարակ էին, փոքրիկ սև բեզերը իրանցով չէին ծածկում նրանց ժպիտը, որ չէր անհետանում և անախորժ տպաւորութիւն էր թողնում, որովհետեւ ես զգում էի, որ նրա յետեւից ծածկուած է ինչ-որ կծու և ինձ համար ոչ նպաստաւոր միտք: Բայց ես չափազանց լաւ էի տրամադրուած, որպէս զի երկար կանգ առնէի իմ ուղեկցի այդ զիծը զիտելու վրայ, ուստի ստուերի նըման արագ անցնելով իմ աչքերում այդ զիծը շատ շուտով անհետացաւ իմ ինքնագոնութեան պարզութեան առաջ: Ես գնում էի նրա հետ կողք կողքի և սպասում էի, թէ ինչ կ'ասի, ծածուկ յուսալով, որ նա կ'աւելացնի այդ երեկոյ իմ զգացած հաճելի բռպէների քանակը: Մարդ ագահ է, որովհետեւ ճակատաղիրը չափազանց սակաւ է ժպտում նրան քաղցրութեամբ:

—Լաւ է, չէ, զգալ իրան ինչ-որ բացառիկ մի բան?—հարցրեց իմ ուղեկցի:

Ես նրա հարցի մէջ առանձին ոչինչ չը լսեցի և շտապեցի համաձայնուել նրա հետ:

—Խէ, խէ, խէ.—կծու ծիծաղեց նա, ջղաձգութեամբ շփշիելով իր բարակ ձկուն մատներ ունեցող փոքրիկ ձեռները:

—Է, դուք ուրախ մարդ էք եղել...—չորութեամբ ասացի ես, զիրաւորուած նրա ծիծաղից:

—Այս, ես ուրախ մարդ եմ,—ժպտալով հաստատեց նա և շարժեց զլուխը:—Եւ յետոյ ես շատ հնտաքրքրուող եմ... Ես միշտ ուղում եմ իմանալ. ամեն բան իմանալ—այդ իմ մշտական ձգտումն է և հէնց այդ է իմ մէջ պահպանում զուարթութիւն և համարձակութիւն: Ահա և այժմ ես ուղում եմ իմ իմանալ թէ ինչ արժէ ձեզ ձեր աջողութիւնը:

Ես նայեցի նրա վրայ և ակամայից պատասխանեցի նրան.

—Մօտ մի ամիս աշխատանք... կարելի է, մի քիչ աւելի...

—Աաա—փութկոտութեամբ յարեց նա... —մի քիչ աշ-

խառանէք, ապա մի մասնիկ կենսական փորձի, որ միշտ մի բան արժէ... Բայց այսուամենայնիւ այդ թանգ չէ, երբ այդ գնով դուք ձեռք էք բերում զիտակցութիւն, որ ահա որոշ մօմենտում մի քանի հազար մարդիկ ապրում են ձեր մտքով, կարդալով ձեր երկը և ապա ձեռք են բերում յոյսեր, որ, կարելի է, ժամանակով... իսէ, իսէ... և երբ դուք կը մեռնէք... իսէ, իսէ, իսէ... Այդ բոլորի համար կարելի է աւելի տալ, նրանից աւելի, որքան դուք տուիք մեզ—դորդ չէ?

Նա կրկին ծիծաղեց իր կցկտուր, կծու ծիծաղով, խորամանկ կերպով չափելով ինձ սուր, ոև աչքերով: Ես ևս նայեցի նրա վրայ վերելից ներքին, վիրաւորուած, սառնութեամբ հարցրի նրան:

—Ներեցէք... ում հետ ես հաճոյք ունեմ զրուցելու:

—Ես ով եմ: Դուք զիլի չէք ընկնում: Իսկ ես առայժմ չեմ ասի ձեզ, թէ ով եմ... Միթէ ձեզ համար մարդու անուն իմանալը աւելի կարեւոր է, քան իմանալ այն, ինչ նա ասաց ձեզ:

—Ի հարկէ, ոչ... Բայց այդ բոլորը... տարօրինակ է...

—պատասխանեցի ես:

Նա չը գիտեմ ինչու համար զիպաւ վերակուիս թեին և, կամացուկ ծիծաղելով քթի տակ, ասաց.

—Է, թող տարօրինակ լինի,—ինչու մարդ երեմն թոյլ տայ իրան զուրս զալ հասարակի և սովորականի շրջանաւը տայ իրան զուրս զալ հակառակ չէք այդ անելու—եկէք պարզ կից... Եւ եթէ դուք հակառակ չէք այդ անելու—եկէք պարզ կասենք: Երեւակայէք որ ես—ընթերցող եմ... մի ոմն տարօրինակ ընթերցող, որ շատ հետաքրքրուող է և կը ցանկար իմաստ, ինչի համար և լինչպէս է շինուում զիրքը... ձեզնից, օրինակ, եկէք ուրեմն խօսենք:

—Օ, ինդքեմ!—ասացի ես..., —ինձ հաճելի են... այդ պիսի հանդիպումներ ե... և խօսակցութիւններ ամեն օր չեն հնարաւոր: Բայց ես արդէն ատում էի նրան, որովհետեւ այդ բոլորը անախորժ էր զառնում: Ես մտածում էի. Ինչ է սա ուզում: Եւ ինչու ես թոյլ տամ ինձ այդ փողոցային հանդիպումին՝ ինձ անձանօթ մարդու հետ, ինչ որ զիսպուտի բնաւորութիւն յատկացնել:

Սակայն, այնուամենայնիւ ես դանդաղ գնում էի նրան կից և աշխատում էի իմ երեսի վրայ արտայատել ուշադրութիւն դէսի իմ ուղեկիցը: Այդ, ես յիշում եմ, դժուարութեամբ էր աջողում ինձ: Բայց, այնուամենայնիւ իմ մէջ դեռ շատ կար զուարթ արամագրութիւն, ես չէի ուզում վիրաւորել այդ մարդուն՝ մերժելով խօսել նրա հետ և վճռեցի հետեւել ինքս ինձ:

Լուսինը փայլում էր երկնքում մեր յետեւից, և մեր ստուերները ընկած էին մեր սոքերի տակ, Մի մութ բիծ կազմելով, նրանք սողում էին մեր առջեւից մայթով, իսկ ես նայում էի նրանց վրայ և զգում էի իմ մէջ մի ինչոր բանի յղացում, որ ինչպէս և այդ ստուերները, մութ էր և անըմբոնելի և, ինչպէս այն ստուերները, նոյնպէս իմ առջեւս էր:

Իմ ուղեկիցը մի բոպէ լոեց և ապա խօսեց իր խոհերին տէր մարդու վատահութեամբ:

—Ոչինչ չը կայ կեանքի մէջ աւելի կարեւոր և հետաքրքրական, քան մարդկային գործողութիւնների շարժառիթներ... Հորդ չէ?

Ես նշան արի գլխով:

—Դուք համաձայն էք!.. Դէ եկէք պարզասիրտ խօսենք... բաց մի թողէք պարզասիրտ խօսելու գէպը, քանի որ գեղ ջահէլ էք...

—Տարօրինակ մարդ!—մտածեցի ես և, հետաքրքրուած նրա խօսերով, հարցրեցի նրան, քմծիծաղ.

—Բայց ինչպէս այդ անել այդպէս... միանգամից? Եւ ինչ մասին խօսե՞լ?

—Իսկ ինչո՞ւ գնալ դանդաղ, երբ կարելի է նպատակին հասնել մի սոստիւնով.—արագութեամբ պատասխանեց նա, նայելով երեսիս, և հին ծանօթի ընտանիութեամբ բացականչեց.

—Եկէք խօսենք գրականութեան նպատակների մասին!

—Լաւ... թէն, ինձ թւում է, արդէն ուշ է...

—Օ! ձեզ համար դեռ ուշ չէ!...

Ես կանգ առայ, զարմացած այդ խօսքերից,—նա արտասանեց նրանց այնպիսի լուրջ վատահութեամբ... և նրանք հնչում էին ինչպէս այլաբանութիւն: Ես կանգ առայ, կամեանալով մի ինչ որ բան հարցնել նրանից, բայց նա, բռնելով ձեռքիցս, կամաց և ստիպողական կերպով առաջ տարաւ, ասելով ինձ.

—Կանգ մի առնէք, որովհետեւ ինձ հետ դուք լաւ ճանապարհ վրայ էք... Բաւական են առաջաբանները! Ասացէք —ինչ է ուղում գրականութիւնը... դուք նրան ծառայում էք, դուք պէտք է այդ գիտենաք:

Իմ զարմանքս ածում էր ի վեաս իմ ինքնազապութեան ի՞նչ է ուղում ինձանից այդ մարդը. Ով է նաև

—Լսեցէք,—ասացի ես,—համաձայնուեցէք, որ այն ամենը ինչ կատարւում է մեր մէջ...

—Ունի իր բաւականաչափ հիմքը,—հաւատացէք ինձ!

իր աշխարհում ոչինչ չի կատարւում առանց բաւականաչափ իմքի... Դէ շուտ արէք զնանք, բայց ոչ դէպի առաջ, այլ դէպի սոր...

Անտարակոյս, այս տարօրինակ մարդը հետաքրքրական ր, բայց նա ինձ զայրացնում էր: Ես կրկին անհամբեր շարում գործեցի դէպի առաջ. նա ինձ հետեւում էր և հանդարութեամբ ասում ինձ.

—Ես ձեղ հասկանում եմ. ձեզ համար գմուար է այս այրկեանում բնորոշել այն նպատակը, որ հետապնդում է գը-ականութիւնը: Փորձեմ ես անել այդ...

Նա շունչ քաշեց և ապա ժամանով նայեց երեսիս.

—Դուք կը համաձայնէք ինձ հետ, եթէ ես ասեմ, որ րականութեան նպատակն է—օգնել մարդուն հասկանալ ինքն բան: բարձրացնել նրա հաւատը դէպի ինքը և զարգացնել րա մէջ ձգտում դէպի ճշմարտութիւնը, մաքառել վատթարի էմ մարդկանց մէջ, կարողանալ գտնել լաւը նրանց մէջ, արթեցնել նրանց հոգիներում ամօթ, ցասում, արիութիւն, անել ամեն բան նրա համար, որ մարդիկ դառնան ազ-ուաբար ուժեղ և կարողանան ոգեւորել իրանց կեանքը գե-նցկութեան սուրբ ողով: Ահա իմ բանաձեւը. նա, ի հարկէ, հակատար չէ, սիեմատիկ է... լրացրէք նրան այն ամենով, նչ կարող է ոգեւորել կեանքը, ասացէք—դուք համաձայն էք նձ հետ?

—Այս, այդ այդպէս է...—ասացի ես:—Ընդունուած է կոր-ել, որ, ընդհանրապէս, գրականութեան նպատակն է—ազ-ուացնել մարդուն... Այդ այդպէս է...

—Ահա ինչ մեծ գործի էք դուք ծառայում!—ազգու կերպով սաց այդ մարդը... և կրկին նա ծիծաղեց իր կծու ծիծաղով. Խէ, խէ, խէ!

—Սակայն, ինչու էք այդ ամենը ասում.—հարցրի ես, ձե-ացնելով, իբրեւ թէ նրա ծիծաղը ինձ չէ զիալչում:

—Բայց ինչպէս էք դուք կարծում: Ասացէք պարզու-իրտ!..

—Պարզաբարտութեամբ ասած...—սկսեցի ես, մտքումս որո-ելով կծու խօսք, և լոեցի: Ի՞նչ է նշանակում բացայայտ-ուուր Այս մարդը յիմար չէ, նա պէտք է իմանայ, թէ որքան եղ են մարդկային պարզաբարտութեան սահմանները և թէ նքնասիրութիւնը որքան զիմացկուն է նրանց պահպանում: այելով իմ ուղեկցի դէմքին, ես զզացի ինձ խոր վիրաւորուած րա ժպիտով—նրա մէջ այնքան հեզնութիւն և սուր արհա-արհանք կար! Մէկ էլ ես զզում էի, որ սկսում եմ երկիւղ-

կրել ինչոք բանից և այդ երկիւղը սախպում է ինձ թողնել, հեռանալ նրանից:

— Ճաեսութիւն! — չորութեամբ ասացի ես, թեթեւ կերպավ բարձրայնելով գլխարկու:

— Ի՞նչո՞ւ — ցածածայն բացականչեց նա:

— Ես չեմ սիրում կատակներ, երբ նրանց մէջ չը կայ չափու սահման:

— Եւ գնացէք... Զեր գործն է... բայց իմացէք, եթէ գուք այժմ ինձ թողնէք գնաք, մենք այլ ևս երբէք չենք հանգիպի:

«Երբէք» խօսքը նա ընդգծեց, և նա հնչեց իմ ականջներում ինչպէս յուղարկաւոր զանգի հարուած: Ես ատում եմ այդ խօսքը և վախենում նրանից. նա միշտ երեւում է ինձ ծանր և սառ, կարծես իբրեւ մի մուրճ, որ ճակատազրից նախասահմանած է մարդկանց յոյսերը ջախջախնելու համար:

— Ի՞նչ է ձեզ հարկաւոր, — թախիծով և չարութեամբ հարցը ես:

— Նստենք այստեղ, — կրկին քմծիծաղ, արտասանեց նա և, ամուր բռնելով ձեռիցս, քաշեց նրան ներքեւ:

Այդ վայրկեանում մենք նրա հետ քաղաքային այգու ծառուղիում էինք, ակացիաների և սիրինգների սառցապատ ճիշդերով շրջապատուած: Լուսնով լուսաւորուած, նրանք կախուել էին օդում իմ գլխի վերեւ և, ինձ թւում էր, թէ սառցով և եղեամով ծածկուած այդ կոշտ ճիշդերը թափանցում են կուրծքիս մէջ և կպչում սրտիս:

Շուարած, յանկարծակիի բռնուած իմ ուղեկցի արարքից, ես նայում էին նրան և լսում:

— Այդ հիւանդի մէկն է, — մտածում էի ես, ցանկալով քաջալերել ինքս ինձ և բացատրել ինձ նրա գործողութիւնները, Բայց նա չը գիտեմ ինչպէս իմացաւ իմ միտքը:

— Դու կարծում ես որ ես աննօրմալ եմ? Թող այդ: Այդ այնպիսի փուչ և վնասակար միտք է! Ծածկուելով նրանով, ինչքան յաճախ մենք հրաժարւում ենք մարդուն հասկանալուց միայն այն պատճառով, որ նա մեզնից աւելի ուրոյն է, և որքան անդրդուելի է այդ միտքը պահպանում ու բարդացնում մեր փոխադարձ յարաբերութիւնների տիսուր անփութութիւնը!

— Օ, ի հարկէ... — ասացի ես, աւելի և աւելի վախ զգալով իմ մէջ այդ մարդու առաջ... — Բայց ներեցէք, ևս կը գնամ... Արդէն ժամանակն է...

— Գնա, — ասաց նա, թօթուելով ուսերը: — Գնա... բայց

իմացիր, որ դու շտապում ես կորցնել զինքդ... խէ, խէ...—նա
բաց թողեց ձեռքս, և ես թողի հեռացայ նրանից:

Նա մնաց այգում, սարի վրայ, որ իջնում էր դէպի վօլ-
գան, սարի վրայ, որ ծածկուած էր ձիւնի սպիտակ սաւանով
և կտրտուած շափկների մութ ժապաւէններով: Նրա առաջ
բացւում էր լայն տեսարան դէպի գեափ միւս կողմում ընկած
լուռ, տրտում հարթութիւնը: Այդ մարդը մնաց այգում, նըս-
տեց նստարաններից մէկի վրայ և սկսեց նայել դէպի ամայի
հեռաստանը, իսկ ես գնում էի ծառուղու երկայնութեամբ և
զգում որ չեմ հեռանալ նրանից, բայց այնուամենայնիւ գնում
էի: Գնում էի և մտածում. պէտք է զանգաղ գնալ թէ արագ,
որպէս զի ցոյց տամ նրան, այն մարդուն, որ նստել էր այն-
տեղ, իմ յետեսից, թէ որքան չնշին նշանակութիւն ունի նա
ինձ համար?

Ահա նա կամաց սուլում է ինչ-որ ծանօթ բան... Ես զի-
տեմ, որ այդ մի ծիծաղաշարժ և տխուր երգ է կոյրի մասին,
որ իր վրայ էր վերցրել կոյրերի առաջնորդի գերը: Ինչո՞ւ է նա
հէնց այդ երգը սուլում,—մտածեցի ես:

Եւ միայն այժմ ես հասկացայ, որ այն բոպէից, երբ ես
պատոհեցի այդ փոքրիկ մարդուն, ևս մոտայ բացառիկ և օտա-
րոտի զգացումների մի մութ շրջանի մէջ: Ո՞ւր է իմ հոգու մի
քիչ առաջ ունեցած հաւասար և բաւական տրամադրութիւնը:
Նա պատուեց ինչ-որ կարեւոր ու ծանր մի բանի սպասողութեան
մշուշով, որ ահա, ահա կը դայ ու կուլ կը տայ ամենը, ինչ
լաւ բան որ տուեց ինձ իմ աջողութիւնը, բոլոր երազանքները
և յոյսերը, որ յարուցեց իմ հոգու մէջ աջողութիւնս.

Ի՞նչպէս դու կը լինես առաջնորդ,
Երբ ճանապարհին ես անծանօթ:

Յիշեցի ես այն երգի խօսքերը, որ սուլում էր այն
մարդը:

Ես շուռ եկայ և նայեցի նրան: Յենուելով մի ձեռքով
ծնկան և զլուխը գնելով ափին, նա նայում էր ինձ, սուլում,
և նրա սև ըեղերը շարժում էին լուսնից լուսաւորուած երե-
սին: Մի ինչ-որ ճակատագրական զգացմունքից մղուած՝ ես
վճռեցի յետ դառնալ: Արադ մօտեցայ ես նրան, նստեցի կողքին
և ասացի նրան, առանց յուղուելու, բայց ջերմագին.

—Լսէք, եկէք պարզ խօսենք...

—Այդ անհրաժեշտ է մարդկանց համար,—նշան արաւ նա
գլխով:

—Դուք, ես զգում եմ, ունէք ձեռքում ինձ վրայ ազ-

դելու ինչոր ոյժ և, ակնյայտնի է, ինձ ինչոր ասելու բան ունեք... այո՞?

—Վերջապէս, դու զտար քո մէջ արիութիւն լսելու!—բացականչեց նա ծիծաղով. բայց այժմ այդ ծիծաղը աւելի մեղմէր և մինչեւ անգամ ուրախութեան մօտ ինչոր շեշտ լսուեց:

—Դէ խօսէք!—ասաց նա,—և եթէ կարող էք, խօսէք առանց տարօրինակութիւնների...

—Օ, լաւ! Բայց համաձայնուիր, որ ախր տարօրինակութիւնները անհրաժեշտ էին նրա համար, որ դէպի ինքս դրաւեմ քո ուշաղրութիւնը? Այժմ բթանում է ուշաղրութիւնը դէպի հասարակը և պարզը, որոնք թւում են չափազանց սառ և կոշտ, իսկ տաքացնել և մեղմացնել մի բան մնաք չենք կարողանում—մենք ինքններս սառն ենք և կոշտ: Մենք, կարծես, նորից ուզում ենք ցնորքներ, գեղեցիկ մտացածին բաններ, երազանք և տարօրինակութիւններ, որովհետեւ մեր ստեղծած կեանքը աղքատ է գոյններով, աղօտ է, ձանձրալի! Իրականութիւնը, որը մենք մի ժամանակ այնպէս ջերմ կերպով ցանկանում էինք վերաշնել, կոտրեց և ճիշեց մնեց... Սրդ ինչ անել: Փորձենք, գուցէ մտացածինը և երեակայութիւնը կ'օգնեն մարդուն բարձրանալ ոչ երկար ժամանակով երկրի վրայ և նորից նշմարել նրա վրայ իր տեղը, որ կորցրել էր կորցրածը, ուզի՞չ? Ախր մարդը այժմ երկրի թագաւորը չէ, այլ կեանքի ստրուկը, նա կորցրել է հպարտութիւնը իր անդրանկութեամբ, ծունկ չոքելով իրողութիւնների (Փակուերի) առաջ, այդպէս չէ? Իր ստեղծած իրողութիւնից նա եզրակացութիւններ է անում և ասում իրան, ահա անհակածառելի օրէնքը! Եւ ենթարկուելով այդ օրէնքին, նա չի նկատում որ ինքն իրան խոչընդոտ է զնում դէպի կեանքի աղքատ ստեղծագործութիւնը տանող ճանապարհի վրայ, արգելք է զնում մաքառման իր սեփական իրաւունքի համար՝ քանզել, որպէս զի յետոյ ստեղծել: Եւ նա այլ ևս չի մաքառում, այլ միայն յարմարւում է... Ինչի՞ համար մաքառի նա: Ո՞ւր են նրա այն իդէալները, որոնց համար նա պատրաստ լինէր նահատակուել: Ահա ինչու այդպէս աղքատ ու տաղտակալի է կեանքը, ահա ինչու ուժասպառ եղաւ մարդու մէջ ստեղծագործութեան ոգին... Ոմանք կուրօրէն փնտում են ինչոր բան, որ, թեւաւորելով միտքը, վերականգնեցէր մարդկանց հաւատը դէպի իրանց անձը: Յաճախ զնում են ոչ այն կողմը, ուր պահուած է բոլոր յաւիտենականը, մարդկանց միացնողը, ուր ապրում է Աստուած... Նրանք, որոնք սիսալում են դէպի ճշմարտութիւնը տանող ճանապարհների մէջ—կը կորսուեն! Թող, չը պէտք է նրանց խանգարել, չարժէ նրանց ավտոսալ—մարդիկ

շատ կան! Կարեոր է ձգտումը, կարեոր է հոգու ցանկութիւնը՝ զանել Աստուծուն, և եթէ կեանքի մէջ կը լինեն հողիներ՝ համակուած ձգտումով առ Աստուած, Նա կը լինի նրանց հետ և կը կենդանացնի նրանց, որովհետեւ Նա է անվերջ ձգտում դէպի կատարելութիւն... Այդպէս չէ?

— Այո, — ասացի ես, — այդ այդպէս է...

— Սակայն դու դիտես և համաձայնուել, — նկատեց իմ խօսակիցս, կծու քմծիծաղով: Ապա նա լոեց, նայելով դէպի հեռուն: Ինձ թուաց որ նա երկար է լուսում, և ես անհամբերութեամբ հառաչեցի: Այն ժամանակ նա, չը գարձնելով ինձ վրայ հեռուում թափառող իր հայեացքը, հարցրեց.

— Ո՞վ է քո Աստուածը:

Մինչ այդ հարցը նա խօսում էր մեղմ ու փաղաքշօրէն, և ինձ հաճելի էր լսել նրան. ինչպէս և բոլոր մտածող մարդիկ, նա մի քիչ տիտուր էր, ինձ մօտ էր, ևս հասկանում էր նրան, և իմ երկիւզանութիւնը նրա առաջ մարում էր: Եւ ահա յանկարծ նա դնում է ճակատազրական մի հարց, որին այնքան գծուար է պատասխանել մեր ժամանակուայ մարդուն, եթէ այդ մարդը շիտակութեամբ է վերաբերում դէպի ինքը: Ո՞վ է իմ Աստուածը, եթէ ես գիտենայի այդ!

Ես ճնշուած էի այդ մարդու հարցից, և իսկապէս ովկ իմ տեղ կը պահպանէր հոգու ամփոփութիւնը: — Իսկ նա նայում էր ինձ վրայ իր սուր աչքերով, շարունակ ժալառում էր և սպասում իմ պատասխանին:

— Քո լուսութիւնը շատ է երկար մի մարդու համար, որ կարողանար տալ ինձ պատասխան: Գուցէ դու ինձ մի բան կ'ասես, եթէ ես քեզնից հարցնեմ ահա ինչի մասին. դու գրում ես և հազարաւոր մարդիկ կարդում են քեզ. իսկապէս ինչ ես դու քարոզում: Եւ գու մտածել ես արդեօք ուսուցանելու իրաւունքիդ մասին?

Կեանքում առաջին անգամ էի ես այդպէս ուշագրութեամբ նայում իմ խորքս: Թող չը մտածեն, որ ես բարձրացնում կամ նուաստացնում եմ ինձ նրա համար, որպէս զի դէպի ինձ զրաւեմ մարդկանց ուշագրութիւնը, — աղքաներից ուղորմութիւն չեն խնդրում: Ես գտայ իմ մէջ ոչ քիչ բարի զգացմունքներ և ցանկութիւններ, ոչ քիչ այն, ինչ սովորաբար լաւ են կոչում, բայց այդ բոլորը միացնող զգացմունք, կեանքի բոլոր երեսյթները պարփակող ներդաշնակ և պարզ միաք ես չը գտայ իմ մէջ: Իմ հոգում շատ կայ ատելութիւն, նա միշտ առկայծում է այնտեղ... երբեմն բորբոքում է բարկութեան

վառ բոցով. բայց առաւել ևս շատ են իմ հոգում տարակուսանքներ. երբեմն դրանք այնպէս ցնցում են իմ խելքը, այնպէս ճնշում սիրաց, որ երկար ժամանակ ես ապրում եմ ներքուստ ամայացուած... Ոչինչ չի դրդում ինձ դէպի կեանքը, սիրոս սառն է, մեռածի նման, միտքս քնած, իսկ երեալյայութիւնս ճնշում են կօշմարներ, Եւ այդպէս, կոյր, համր և խուլ, ապրում եմ երկար օրեր և գիշերներ, ոչինչ չը դանկանալով, ոչինչ չը հասկանալով. ինձ թւում է այն ժամանակ, որ ես արդէն դիակ եմ և միան ինչ-որ տարօրինակ թիւրիմացութեամբ գեռ ես թաղուած չեմ հողի մէջ: Այդպիսի գոյութեան սարսափը աւելի ես ուժեղանում է ապրելու անհրաժեշտութեան գիտակցութեամբ, որովհետև մահի մէջ աւելի ես քիչ կայ իմաստ, աւելի շատ է խաւարը... Անշուշտ մահը խլում է մինչև անգամ և ատելու հաճոյքը...

Ի՞նչ եմ, իսկապէս, ես քարոզում, ևս—այնպէս, ինչպէս որ կամ Եւ ինչ կարող եմ ես ասել մարդկանց, Այն, ինչ արդէն վազուց ասել են նրանց և միշտ ասում են, ինչ գտնում է լըսողներ, բայց չի դարձնում մարդկանց աւելի լաւ? Բայց ունեմ արդեօք իրաւոնք քարոզելու այդ գաղափարները և հասկացողութիւնները, եթէ ես ինքս, նրանցով դաստիարակուած, յանձիս այնպէս չեմ վարւում, ինչպէս նրանք հրամայում են? Եթէ ես գնում եմ հակառակ նրանց, արդեօք այդ նշանակում է, թէ նրանց ճշմարիտ լինելու համոզմունքը իմ անկեղծ համոզմունքն է, որ դրուած է իմ «Հա»-ի հիմքում?... Արդ ինչ պէտք է պատասխանեմ ես այն մարդուն, որ նստած է իմ կողքիս: Իսկ նա արդէն յոդնել էր սպասել իմ պատասխաններին և նորից սկսեց խօսել.

—Ես չէի գնիլ քեզ այդ հարցերը, եթէ չը տեմնէի, որ քո փառասիրութիւնը գեռ ես ժամանակ չի գաել ոչնչացնելու քո պատիւը: Դու քաջութիւն ունես լսել ինձ... դրանից ես եղրակացնում եմ, որ քո սէրը դէպի քո մնձը խելացի է, որովհետև ուժեղացնելու համար այդ սէրը դու չես փախչում նոյն իսկ տանջանքներից: Դրա փոխարէն ես կը թեթևացնեմ իմ առաջ քո դրութեան ծանրութիւնը և կը խօսեմ քեզ հետ իբրև մեղաւորի և ոչ ոճրագործի հետ:

—Մի ժամանակ մեր մէջ ապրում էին խօսքի մեծ վարպետներ, կեանքի և մարդկային հոգու նուրբ գիտակներ, մարդկի, որոնք համակուած էին՝ գոյութիւնը կատարելագործելու անընկծելի ձգտումով, համակուած էին խոր հաւատով գէպի մարդը: Նրանք ստեղծում էին զրքեր, որոնց երբէք չի գիպչի մոռացութիւնը, որովհետև այն դրքերի մէջ դրոշմուած են յա-

ւիտենական ճշմարտութիւններ, նրանց էջերից բուրում է անշիցելի գեղեցկութիւն։ Այդ գրքերի մէջ գծագրուած պատկերները կենդանի են, որովհետև ներշնչուած են ոգևորութեան ուժով, իսկ վարմունքների և կեանքի կանոնների օրինակները յաւիտեան կը մնան անսասան։ Այս գրքերում կայ և արիութիւն, և բոցավառ բարկութիւն, նրանց մէջ հնչում է և սէր անկեղծ ու ազատ, և ոչ մի աւելորդ խօսք չը կայ նրանց մէջ։ Այնտեղից, գիտեմ ես, գու վերցնում էիր մնունդ քո հոգու համար... Բայց, երեխ, վատ էր մնում քո հոգին, որովհետեւ քո ասածները ճշմարտութեան և սիրոյ մասին հնչում են կեղծ ու երեսպաշտ, կարծես թէ դու բռնաբարում ես քեզ, երբ խօսում ես դրա մասին։ Դու, լուսնի նման, լուսաւորում ես ուրիշի լուսով, քո լոյսը տխուր-աղօտ է, նա բազմացնում է ստուերներ, բայց թոյլ է լուսաւորում և ոչ ոքի չի տաքացնում։ Դու աղքատ ես որպէս զի տաս մարդկաց մի իսկապէս արժեքաւոր բան, իսկ այն, ինչ որ նրան տալիս ես, դու տալիս ես ոչ բարձր հաճոյքի համար՝ հարստացնել կեանքը մաքի եւ խօսքի գեղեցկութեամբ, այլ առաւել շատ նրա համար, որ քո դոյութեան պատահական իրողութիւնը բարձրացնես մինչեւ մարդկանց համար անհրաժեշտ և զարմանալի մի երեսոյթի (Փենօմենի) աստիճան։ Դու տալիս ես նրա համար, որ աւելի վերցնես կեանքից և մարդկանցից։ Դու աղքատ ես ընծաների համար, դու ուղղակի վաշխառու ես—տալիս ես քո փորձի փշրանքը՝ դէպի քեզ ուշազրութեան տոկոսներով։ Քո գրիչը թոյլ կերպով բարզում է իրականութիւնը, կամացուկ շուռ ու մուռ է անում կեանքի մանրունքները, և նկարագրեալով սովորական մարդկանց սովորական զգացմունքները, դու բաց ես անում նրանց մաքին, գուցէ, և շատ ստոր ճշմարտութիւններ, սակայն կարող ես զու ատեղծել նրանց համար թէկուզ փոքրիկ, հոգին վեհացնող պատրանք?... Ոչ! դու հաւատացած ես, որ օգտակար է փորփորել սովորականութեան աղքակոյտի մէջ և չը կարողանալ գանել այնտեղ ոչինչ, բայց տխուր, փշրանքի ճշմարտութիւններ, որոնք միայն այն են հաստատում, որ մարդ չար է, յիմար, անազնիւ, որ նա լիակատար կերպով և միշտ կախուած է բազմաթիւ արտաքին պայմաններից, որ նա անզօր է և ողորմելի մննակ և ինքն իրան։ Գիտես, քեզ, գուցէ, արդէն աջողուեց համոզել նրան այդ բանում! Որովհետև նրա հոգին սապցրած է և խելքը բութ... ի հարկէ! Նա նայում է իր նկարագրի վրայ քո գրքերում, իսկ զրբերը, մանաւանդ եթէ նրանք գրուած են այն չխտահութեամբ, որ այնքան յաձախ դուք ընդունում եք տա-

դանդի տեղ, միշտ յայտնի չափով հիպնօսում են մարդուն: Նա նայում է իր վրայ քո նկարագրութեան մէջ և, տեսնելով, որքան ինքը վատ է, չի տեսնում՝ աւելի լաւ լինելու հնարաւորութիւն: Միթէ դու կարողանում ես ցոյց տալ նրան այդ հնարաւորութիւնը: Միթէ դու կարող ես այդ անել երբ դու ինքդ... բայց ես կը խնայեմ քեզ նրա համար, որ, լսելով ինձ, դու, ես զըգում եմ, մտածում ես ոչ նրա մասին, թէ ինչպէս պատասխանել ինձ և արդարացնել քեզ: Այդպէս! Որովհետեւ ուսուցիչը, եթէ նա ազնիւ է, միշտ պէտք է լինի ուշադիր աշակերտ: Դուք բոլորդ, մեր օրերի կեանքի ուսուցիչներդ, աւելի շատ էք խըլում մարդկանցից, քան տալիս նրանց: որովհետեւ դուք հէնց միայն պակասութիւնների մասին էք խօսում, միայն պակասութիւններն էք տեսնում: Բայց մարդու մէջ պէտք է լինեն և արժանաւորութիւններ, չէ որ ձեր մէջ կան արժանաւորութիւններ? Իսկ դուք, ինչով էք դուք զանազանուում սովորական, հասարակ մարդկանցից, որոնց նկարագրում էք այնքան խստասիրտ և բծախնդիր կերպով, ինքներդ ձեզ համարելով քարոզիչներ, առաքինութեան յաղթանակի համար՝ արատներ մերկացնողներ? Սակայն նկատում էք արդեօք, որ առաքինութիւնները և արատները՝ դրանց որոշելու համար գործ դրած ձեր ջանքերի չնորհիւ միայն խճուած են, ինչպէս թեկերի երկու կծիկներ, ուեւ և սպիտակ, նրանք մերձաւորութիւնից դառել են մոխրագոյն, մէկը միւսից ընդունելով նախասկզբնական գոյնի մասը?: Եւ հազիւ թէ ձեզ Առառուած լինի երկիր ուղարկած... Նա կ'ընտրէր աւելի ուժեղներին, քան դուք: Նա կը վասէր նրանց սրտերը բուռն սիրոյ կրակով գէպի կեանքը, գէպի ճշմարտութիւնը, գէպի մարդիկ, և նրանք կը բոցավառէին մեր գոյութեան խաւարում, ինչպէս նրա զօրութեան և փառքի ճրագներ... Իսկ դուք միխում էք, ինչպէս սատանայի յաղթանակի ջահեր, և ձեր մուլսը, մտնելով խելքերի և հոգիների մէջ, թունաւորում է նրանց անխստահութեան թոյնով գէպի իրանց: Ասա. ինչ էք ուսուցանում դուք:

Ես զգում էի իմ թուշի վրայ այդ մարդու տաք շունչը և չէի նայում նրա վրայ, վախենալով հանդիպել նրա հայեացքի հետ: Նրա խօսքերը ընկնում էին իմ ուղեղս, ինչպէս հրային կաթիւներ, և դրանից ես ցաւ էի զգում... Ես սարսափով հասկանում էի թէ ինչպէս դժուար է պատասխանել հասարակ հարցերին... Եւ չը պատասխանեցի նրան:

—Ուրեմն, ես, ջանագիր ընթերցողս այն ամենի, ինչ զըրում ես դու և ինչ գրում են քեզ նմանները, հարցնում եմ. ինչի՞ համար էք դուք գրում: Իսկ դուք շատ էք գրում... Ու-

զում էք դուք արդեօք արթնացնել բարի զգացմունքներ մարդկանց սրտերում! Բայց սառը և անոյժ խօսքերով դուք այդ չեք անի, ոչ! Եւ դուք ոչ միայն չեք կարող տալ կեանքին մի նոր բան, դուք նաև հինը տալիս էք կոլորոտած, ճիշտած, կերպարանազուրկ ձեւով: Կարդալով ձեզ, ոչինչ չես ուսանում, ոչ մի բանի համար, բացի ձեր տեղ, չես ամաչում: Բոլորը սովորական բաներ, սովորական մարդիկ, սովորական մարդեր, անցըքեր... Իսկ Բըր կը խօսեն խոռվայոյզ ոգու մասին և ոգու վերածնութեան անհրաժեշտութեան մասին: Ուր է կոչը ստեղծագործելու կեանքը, ուր են արխութեան դասերը, ուր հոգին թեւաւորող աշխոյժ խօսքերը:

... — Դու կարող ես ասել ինձ. կեանքը չի տալիս այլ պատկերներ, բացի այն, որ մենք ենք վերաբտադրում: Մի խօսիր այդպէս, որովհետեւ խօսքին տիրապետելու բախտ ունեցող մարդու համար ամօթալի և խայտառակ է խոստովանել սեփական անզօրութիւնը կեանքի առաջ և խոստովանուել որ ինքը չէ կարող նրանից բարձր կանգնել: Իսկ եթէ դու կանգնած ես կեանքի հետ մի մակերեւոյթի վրայ, եթէ դու անկարող ես քո երեւակայութեան ոյժով ստեղծել այնպիսի պատկերներ, որոնք չը կան կեանքում, բայց որոնք անհրաժեշտ են նրան ուսուցանելու համար — ինչ օգուտ քո աշխատանքի մէջ և ինչով կ'արդարացնես դու քո կոչումը: Կուտակելով մարդկանց յիշողութիւնը և ուշագրութիւնը նրանց կեանքից վերցրած լուսանկարչական պատկերների աւլածքով, մի կեանքի, որ աղքատ է անցքերով, մտածիր, արդեօք չես վնասում դու մարդկանց? Որովհետեւ, խոստովանուիր, դու չես կարողանում այնպէս նկարագրել որ կեանքի քո պատկերը յարուցանէր մարդու մէջ վրէժինդրական ամօթ և այրող ցանկութիւն ստեղծելու գոյութեան այլ ձեւեր... Կարող ես արդեօք դու արագացնել կեանքի զարկերակի բարախումը, կարող ես դու ներշնչել նրա մէջ եռանդ, ինչպէս այդ անում էին ուրիշները:

Իմ տարօրինակ խօսակիցը մի բոպէ կանգ առաւ, իսկ ես լոելեայն մտածում էի նրա խօսքերի մասին:

— Ես իմ շուրջ տեսնում եմ շատ խելօք մարդիկ, բայց քիչ կան նրանց մէջ ազնիւ մարդիկ, սակայն նրանք էլ որ կան, ջախջախուած են և հիւանդ հոգով: Եւ չը գիտեմ ինչու միշտ այսպէս եմ դիտում ես. որքան լաւ է մարդ, որքան մաքուր և շիտակ է նրա հոգին, անգան պակաս է նրա մէջ եռանդը, այնքան հիւանդու է նա, և ծանր նրա համար ապրելը: Մենակութիւնը և կարօտը — այդ տեսակ մարդկանց վիճակն է: Բայց

ինչքան և շատ լինի նրանց մէջ լաւագոյնի մասին կարօտը, նրանց մէջ չը կայ ոյժ ստեղծելու համար այդ լաւագոյնը։ Արդեօք այն պատճառով չեն նրանք այնպէս ջախջախուած և ուղորմելի, որ նրանց իր ժամանակին չի տուած եղել հոգին խրախուսող խօսքով՝ օդնութիւն?...»

Մէկ էլ,—նորից սկսեց խօսել իմ տարօրինակ զրուցակիցը,—կարող ես դու մարդու մէջ յարուցանել կմնառւրախ ծիծաղ, որ մաքրում է հոգին։ Տես, ախր մարդիկ բոլորովին յետ են սովորել լաւ ծիծաղելուց! Նրանք ծիծաղում են չար կերպով, ծիծաղում են ստորաքաշ, յաճախ ծիծաղում են արտասուքի միջով, բայց երբէք չես լսի նրանց մէջ ուրախ, անկեղծ ծիծաղ, այն ծիծաղը, որ պէտք է գլրդեցնէր մնեների կուրծքը, որովհետեւ լաւ ծիծաղը առողջացնում է հոգին... Մարդու համար ծիծաղելը անհրաժեշտ է, չէ որ ծիծաղը—նրա սակաւաթիւ առաւելութիւններից մէկն է կենդանիներից, կարող ես դու յարուցանել մարդկանց մէջ որ և է այլ ծիծաղ բացի կշտամբանքի ծիծաղից, բացի ցածհողի ծիծաղից քեզ, մարդուգի վրայ, որը միայն նրանով ես ծիծաղելի, որ խղճուկ ես։ Հասկացիր, քարոզելու իրաւունքը պէտք է ունենայ բաւականաչափ հիմք քո ընդունակութեան մէջ՝ յարուցանել մարդկանց մէջ անկեղծ զգացմունքներ, որոնցով, ինչպէս մուրճներով, կեանքի որոշ ձեւեր պէտք է ջախջախուեն և աւերուեն նրա համար, որ ստեղծուեն ուրիշները աւելի աղաւաները, անձուկների փոխարէն։ Բարկութիւն, ատելութիւն, արիութիւն, ամօթ, զգուանք և, վերջապէս, չար յուսահատութիւն—ահա լծակներ, որոնցով կարելի է քարուքանդ անել ամեն ինչ երկրի վրայ։ Դու կարող ես ստեղծել այդպիսի լծակներ։ Դու կարող ես շարժման մէջ զցել նրանց։ Որպէս զի իրաւունք ունենալ ուղղել խօսքը ժողովրդին, պէտք է հոգու մէջ ունենալ կամ մեծ ատելութիւն դէպի նրա պակասութիւնները, կամ մեծ սէր դէպի ժողովուրդը՝ նրա տանջանքների համար, իսկ եթէ քո հոգում չը կան այդ զգացումները, եղիր համեստ և շատ մոտածիր առաջ, քան մի բան ասել...

Արդէն լուսանում էր, բայց իմ հոգու վրայ աւելի և աւելի էր թանձրանում խաւարը իսկ այն մարդը, որի համար իմ հոգում գաղտնիքներ չը կային, բոլորը ասում էր, երբեմն իմ մէջ բռնկում էր մի միտք։

—Տեսնես արդեօք մարդ է նա?

Բայց, կուլ գնացած նրա խօսքերով, ես չէի կարող մտածել այդ հանելուկի մասին, և նորից իմ ուղեղի մէջ, ինչպէս ասեղներ, ցցւում էին նրա խօսքերը։

—Կեանքը այնուամենայնիւ աճում է թէ լայնութեամբ և թէ խորութեամբ, թէև նա աճում է դանդաղ, որովհետեւ ձեզ մօտ չը կայ ոյժ և կարողութիւն արագացնել նրա ընթացքը։ Աճում է կեանքը, և իւրաքանչիւր օրով մարդիկ սովորում են հարցնել Ո՞վ է նրանց պատասխանելու։ Պէտք է որ գուք, ինքնակոչ-առաքեալներդ, այդ անէիք։ Սակայն հասկանում էք գուք կեանքը այնքան, որ բացատրէք նրան ուրիշներին։ Սակայն հասկանում էք գուք ձեր ժամանակուայ պահանջները, նախազգում էք գուք ապագան, և ինչ կարող էք ասել գուք՝ յուզելու համար մարդուն, որ փշացած է կեանքի ապականութեամբ, որ լքուած է ողով։ Նա լքուած է ողով, նրա հետաքրքրութիւնը կեանքով ցած է, արժանապատութեամբ ապրելու ցանկութիւնը նրա՞մէջ հատնում է, նա ուզումէ ապրել սոսկ, ինչպէս խոզը, և—դուք լսում էք։ — Նա արդէն լրբարար ծիծաղում է, երբ արտասանում են իդէալ խօսքը։ Տարդ դառնում է միայն ոսկորների մի կոյտ, ծածկուած մասվ և հաստ կաշով, այդ գարշելի կոյտը շարժում է ոչ՝ոգին, այլ ստոր կրքերը։ Նա պահանջում է ուշագրութիւն—չուտ! օդնէք նրան ապրել, քանի նա դեռ մարդ է! Սակայն ինչ էք կարող գուք անել յարուցանելու համար նրա մէջ կեանքի ծարաւը, քանի որ գուք միայն մրմնջում էք, ախ ու վախ էք քաշում կամ անտարերութեամբ նկարագրում էք, ինչպէս է նա կազմալուծում? Կեանքի վրայ բուրում է փաման հոտը, վախ-կոտութիւնն ու սարկահոգութիւնը ծծուել են սրտերի մէջ, ծուլութիւնը կաշկանդել է մտքերն ու ձեռները փափուկ կապանքներով... Ի՞նչ էք դուք մտցնում ապականութեան այդ քաօսի մէջ։ Որքան դուք բոլորդ մանր էք, որքան ողորմելի, որքան շատ էք դուք! Օ, եթէ երեար խիստ և սիրող մի մարդ բոցավառ սրտով և հզօր, համապարունակ խելքով! Անարդ լուսութեան հեղձուկի մէջ կը հնչէին մարգարէական խօսքերը, ինչպէս զանգի հարուածներ, և գուցէ, շարժուէին կենդանի մեռելների արհամարհելի հոգիները!...

Այդ խօսքերից յետոյ նա երկար լուս էր։ Ես չէի նայում նրա վրայ, Զեմ յիշում ինչն էր աւելի իմ մէջ—ամօթը թէ դարձուածնը?

—Ի՞նչ ես կարող ասել դու ինձ։ —Ի՞նչեց անկարեկից հարցը։

—Ոչինչ...—պատասխանեցի ես

եւ կրկին լուսթիւն էր։

—Իսկ ինչպէս այժմ դու պիտի ապրես։

—Չը զիտեմ...—պատասխանեցի ես։

—ի՞նչ ես դու խօսելու:

Ես լոռութիւնամբ անցի:

—Զը կայ լոռութիւնից գերիվեր իմաստութիւն!...

Տաժանսելի էր լոռութիւնը նրա այդ խօսքերի և այն ծիծաղի արանքում, որ լսուեց լոռութիւնից յետոց: Նա ծիծաղում էր հրճուանքով, ինչպէս մի մարդ, որին վազուց արդէն դէպք չէր պատահել այդպէս ազատ և անուշ ծիծաղելու: Իմ սիրտս արիւնով էր լաց լինում այդ անիծեալ ծիծաղից:

—Խէ, խէ, խէ! Եւ այդ դու ես—կեանքի ուսուցիչը: Դու, որին այդքան հեշտ է շփոթել? Սյժմ, ես կարծում եմ, դու հասկացար թէ ով եմ ես, չէ, խէ, խէ... Եւ իւրաքանչիւրը ձեզնից, ծերունի ծնուած պատանիներից, նոյնպէս կը շփոթուէր, եթէ ուզենար գործ ունենալ ինձ հետ: Միայն նա, ով իրան պատել է ստութեան, լրբութեան և անամօթութեան զրահով, չի դողալ իր խղճի գատաստանի առաջ... Ահա ուրեմն որքան ես դու ուժեղ, փոքրիկ հարուած և դու կ'ընկնես: Ասա ինձ, դէ ասա ինձ մի բան քեզ արդարացնելու համար, չըիր այն, ինչ ես ասացի! Ազատիր քո սիրտը ամօթից և ցաւից: Եղիր գէթ մի վարկեան ուժեղ և ինքնավտահ, և ես յետ կը վերցնեմ այն, ինչ որ չպրտեցի քո երեսին: Ես կը խոնարհուեմ քո առաջ... Ցոյց տուր ինձ քո հոգու մէջ գէթ մի այնպիսի բան, որ օգնէր ինձ քեզ ուսուցիչ ճանաչել! Ինձ հարկաւոր է ուսուցիչ, որովհետե ես մարդ եմ. ես մոլորուել եմ կեանքի խաւարում և որոնում եմ ելք դէպի լոյս, գէպի ճշմարտութիւն, գեղեցկութիւն, գէպի նոր կեանք,—ցոյց տուր ինձ ճանապարհներ! Ես մարդ եմ:—Ստիր ինձ, խիփիր, բայց գէպի կեանք հանիր ինձ իմ անտարբերութեան տիզմից! Ես ցանկանում եմ աւելի լաւ լինել, քան կամ. —ինչպէս այդ անկը: Սովորցրու!

Ես մտածում էի. արգենօր կարող եմ ես, կարող եմ բաւարարութիւն տալ այն պահանջներին, որ մարդ, ըստ իր իրաւունքի, գնում է իմ առաջ? Կեանքը մարում է, բիւրաւոր տարակուսանքներ աւելի և աւելի ամուր են շրջապատում մարդկանց խելքը և պէտք է ելք գտնել: Ուր է ճանապարհը: Մի բան ես գիտեմ—ոչ գէպի բախտաւորութիւնը պէտք է ձգտել, ինչի՞ համար է բախտը: Բախտի մէջ չէ կեանքի իմաստը, և ինքնաբաւականութեամբ գոհացած չի լինի մարդ—նա այնուամենայնիւ գրանից բարձր է: Կեանքի իմաստը գէպի նպատակները մղող ձգտումների գեղեցկութեան և ոյժի մէջ է, և պէտք է, որ գոյութեան իւրաքանչիւր վարկեան ունենար իր վեհ նպատակը: Այդ հնարաւոր կը լինէր... բայց ոչ կեանքի հին շրջա-

նակներում, որոնց մէջ բոլորի համար այնքան նեղ է և ուր չը կայ մարդու ոգու համար ազատութիւն...

Եւ նա նորից ծիծաղում էր, բայց արդէն կամաց, մի մարդու ծիծաղով, որի սիրտը մաշուած է խոհերով:

—Ինչքան շատ մարդիկ են եղել երկրի վրայ, բայց ինչքան քիչ արձաններ են կանգնեցրուած նրա վրայ! Ինչո՞ւ պէտք է այդպէս լինէր, Բայց անէծքի մատնենք անցեալը—նա չափազանց շատ է յարուցանում նախանձ դէպի ինքը! Ովովհետեւ ներկայումս բնաւ չը կան այնպիսի մարդիկ, որոնք մահից յետոյ թողնէին իրանց յետեւից որ և է հետք երկրի վրայ: Նիրահում է մարդ... և ոչ ոք չի զարթեցնում նրան: Նիրհում է նա և զառնում անասուն: Երան հարկաւոր է մարակ և սիրոյ հրավառ փաղաքանք մարակի հարուածից յետոյ: Մի վախեցիր ցաւ պատճառելու նրան, եթէ դու սիրելով ես խփում, նա կը հասկանայ քո հարուածը և կ'ընդունի նրան, ինչպէս արժանացած: Իսկ երբ նա ցաւ կը զգայ և ամօթ իր համար, դու ջերմաջերմ փաղաքչիր նրան—և նա կը վերածնուի... Մարդիկ? Դրանք դեռ ես երեխաններ են, թէն երբեմն նրանք ապշեցնում են իրանց արարքների չարագործութեամբ և մաքի խեղաթիւրումներով: Եւ նրանք միշտ կարօտ են դաստիարակման, խնամատարութեան, սիրուելու, մշտական հոգատարութեամն՝ նրանց հոգու համար թարմ և առողջ աննդի մասին... Իսկ դու զիտես սիրել մարդկանց?

—Սիրել մարդկանց?—Կրկնեցի ես հարցը տարակուսանքով, որովհետեւ, ստոյգը, չը զիտեմ, արգեօք սիրում եմ ես մարդկանց: Պէտք է լինել անկեղծ—ես այդ չը զիտեմ: Ով կ'ասի. իր մասին ահա ես սիրում եմ մարդկանց! Ուշադրութեամբ իրան հետեւող մարդը երկար կը մտածի այդ հարցի վրայ. նախ քան կը վճռի ասել՝ սիրում եմ: Բոլորեքեան զիտեն թէ որքան հեռու է մեզ իւրաքանչիւրից մեր մերձաւորը:

—Դու լուսւմ ես? Ողջ մէկ է—ես հասկանում եմ քեզ անգամ անխօսիգ... Եւ ես գնում եմ...

—Արդէն?—կամաց հարցրի ես: Որովհետեւ որքան և ահութի էր նա, ես ինքս ինձ համար աւելի ես ահութի էի...

—Այո, ես գնում եմ... Դեռ շատ անգամ ես կը զամ քեզ մօտ: Սպասիր!

Եւ նա գնաց:

Ի՞նչպէս գնաց: Ես այդ չը նկատեցի: Նա գնաց արագ և անշշուկ, ինչպէս որ անհետանում են ստուերները... Իսկ ես դեռ երկար մնում էի պարտիզում նստարանի վրայ, չը զգա-

լով դրսից ցուրտ և չը նկատելով, որ արդէն արեգակը բարձրաց եել է և վառ փայլում են նրա ճառագայթները ծառերի սառցածածք ճիւղերի վրայ: Տարօրինակ էր ինձ համար տեսնել պարզ օր և արեգակ, որ փայլում էր անտարբեր, ինչպէս միշտ, տեսնել և այդ ծեր, չարատանջ երկիրը, հագած արեգակի ճառագայթների մէջ շլացուցիչ կերպով փայլատակող ձիւնի ծածկոյթը...

Թարգմ. Ե. Ա.